


ՊԱՏՈՒՄԻՆՈՒԹՅՈՒՆ

Պաշտարան	համար
Տարեկան	12 Ֆր
Չեղանկայ	6 »
Արտատպանի համար տարեկան	15 »
Չեղանկայ	8 »
Անտիկալի համար	
Տարեկան	3 ցր.
Չեղանկայ	1.50 »

Մանուցման տար ասու
լին երեսին համար 40 ս.
իսկ վերջին երեսի հա-
մար 20 սակարի է. երե-
նիս մեջի սկզբակերտ
համար 20 Օյո գեղջ կըշ
լայ
Վառանցի համար ձևի 10 սակարի



W. G. Kalemcarian, Mésénariste
(Autriche)
W. 4.
Mésénariste Gasse
Vienne

Նամակ և գրամ գրկե
հարգություններ հա-
ցիկն

Редакция на вѣстникъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjoum“
Varna (Bulgarie)

Արտատպանի համար
ձևի
(20 ՍԱՆԹԻՄ)
Պաշտարան համար
ձևի
(15 ՍԱՆԹԻՄ)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂՎԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ԶԲ ՏՐԱՎԱՌԻ ԶՈՐԵՔՆԵՐԻ ԶԱՐԴՈՒ ՕՐԵՐԸ

Գրուքիւնք ևս չեն տրուիր

ՉԱՐՅՈՒՆ Ի ԲԱՃԱՆՈՐԴ ԳՐՈՒՆԴԸ ԲԱՃԱՆԳՐԸ ՊԵՏԻ ԵՒ ԱՆՆՈՒԿ ՎԱՐԻ

ՀԱՅՐԻԿԻ ՂՐԿԱՆՍ ՊԱՏՄԱՄԱՆ ԻՈՐՈՒԹՅՈՒՆ

Տէրուանել Գոնստան, Տրնի
Կոչեն և Բրեստանէ պատգամա-
տորներու խնդրանք. արտաքին
գործոց նախարար Պ. Տէրգասէն
ընդունեց երէկ յուլիս 29/16ին
հայոց երկու արքեպիսկոպոսնե-
րը՝ Սարաճեան և Այվատեան, ո-
րոնք հայոց կաթողիկոսի յանձ-
նարարութեամբ նկարագրեցին
հայերու արևուրդը և թուրք-
ազնուեցան նաև նախագահ Լու-
պէն, որ բժիշկ Լորիս Մելիքովին
խնդրեց յայտարարել նկատմամբ
իրունեցած ջերմագին համակրու-
թեան մասին վստահացուց :

ՍԱՍՈՒՆԵՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի ճամբով՝ Մուշէն հետե-
ալը կը հետադրեն Թանի :
Թուրք կառավարութիւնը բա-
նի Մուշէն դուրս հանած է սա-
տուցի փախստականները՝ թուով
1500 այր մարդ և 4500 կին ու
տղայ, զանոնք իրենց լեռները
կրկին բնակեցնելու համար : Ի
զուր խեղճերը երեք օրուան ժա-
մանկամիջոց խնդրեցին, որ-
պէս զի պատրաստուին : Անոնց
մէջ կը գտնուէին վերաւորեալ-
ներ, ծերեր, երեխաներ, գրե-
թէ բոլորն ալ մերկ : Ճամբան
առջին ու յոգնութենէն բազմա-
թիւ մահեր պատահեցին եւ զերսն
թէ ճամբան հազիւ մէյմէկ շերտ
հաց տրուած է իրենց, խոստա-
նալով Սասուն հասնելուն լրա-
ցուցիչ պիտոյքներ յատակարար-
ելու : Բայց երբ իրենց տեղերը
կը հասնին միայն տասնական փա-
րա կը տրուի ամէն մէկուն, որով
անկարելի կըլլայ իրենց համար
հաց ճարել լեռներու մէջ : Այս
պահուստով կը սպասուայ Սասու-
նի կառավարութիւնը որոշած է
ուրիշ ջորանոց շինել Սասունի
մէջ և գիւղացիներուն հոգերը
քիւրտերու անտան արձանագրել :

Սասունցիք կը յայտարարեն թէ
իրենց տեղերը կրնան վերահաս-
տատուիլ միմիայն հետեւեալ
պայմաններով .
1.— Կառավարութիւնը զօրա-
նոց շինելու մտքէն հրաժարի,
որովհետեւ, կրտսն, շին կրնար
իրենց կիներուն պատիր թուրք
վայրերի զօրքերուն վստահիլ :
2.— Չորանոց պէտք է շինել Մատթա-
նի, Խարզանի, Խօվուրի, Կա-
պուտեղի մէջ, որոնց քիւրտ բը-
նակիչները միշտ պատամբ վի-
ճակի մէջ են և աւազակութեամբ
կը զբաղին :
3.— Սասունցիք պէտք է ի-
րենց հոգերու կատարելապէս տէր
մնան :
4.— Պէտք է իրենց վճարուի
կրած վնասներն փոխարէնը :
5.— Թուրք զօրքերու կողմէ
քանդուած բնակարանները պէտք
է կառավարութեան կողմէ վերա-
շինուին :
6.— Պէտք է այսուհետեւ ար-
գիլուի քիւրտերուն ամառ ատեն
Սասունի լեռներուն վրայ հաս-
տատուիլ :
7.— Եւրոպական հիւպատոսնե-
րը արի մը պէտք է Մուշ մնան
Սասուն այցելելու և կառավարու-
թեան ընթացքը հսկողութեան
ենթարկելու համար :
Ժողովուրդը անձկանօք կը ս-
պասէ գեղացիներու միջամտու-
թեան : Հակառակ պարագային ո-
րոշած են կամ գաղթել կամ մին-
չեւ մահ կուրիլ :
— «Տէյիւր Նիւզ»-ը Թավրիզէն
26/13 յուլիսի թուականով հեռա-
գիր մըն է ստացեր, որ նոր լոյս
կը սփռէ Հայաստանի վիճակին
վրայ : Կհա այդ հեռագիրը .
Յուլիս 13ին Նէյիւ Սալուն ցեղա-
պետը իր աշիրաթով յարձակե-
ցաւ Իւջքիլիսէի և Կուլիպուճակ
գիւղերու վրայ, զանոնք աւերե-
լով բնակչութիւնը օրի քանցց :
Ուրիշ քրտական ցեղեր աւերե-
ցին Չոպան և Կարապաղար գիւ-
ղերը : Իւջքիլիսէի մէջ կանոնա-
ւոր զբաղանակը միացած էր
քրտերուն : 25 տղամարդ է աւելի
են սպաննուածները, բռնաբար-

ուած են կիներ : Պայագիտի և
Սուճագի գաւառներու մէջ ջարդ
կը պատրաստուի : Անյապազ օգ-
նութիւնը անհրաժեշտ է :
ՄԻՔԱՅԷԼ ԺՄՍԿՈՉԵԱՆ
(ԱՍՁԻԿ—ՆՇՈՒՆ)
Կրեւ մըն ալ խաւարեցաւ,
հայկական ազատագրութեան հո-
րիչունի վրայ, մին այն տաք,
կեանքատ արեւնհրէն, որոնց
հոգիները ընդվզումի բոցերով
համակ հրդեհուած՝ վարդազոյն
արշալոյսներու պսոթառութիւնը
կը ցոլացնեն իրենց մէջ, և ո-
րոնք իրենց խօսկան, վսեմ խո-
յանքներով դէպի մաքառումի
փրկուէտ ճամբաներուն կը մար-
նիսացնեն մեր կարօտակեղ աշ-
քերը, առաջնորդուելու համար
վերջապէս հոն՝ որ հանգրուանն
է գարաւոր վիշտերու, հալա-
ծանքներու, անարգանքներու
փոթորկալից շրջանին :
Այս անբիծ ու պայծառ դէմ-
քերէն մէկն էր Պուլկարիոյ և
մասնաւորապէս Վառնայի Դաշ-
նակցականներուն շատ ծանօթ
Միքայէլ Ժամկոչեանը (նշան) :
Ինիկ Յէկեցի, ազբատ ընտանի-
քի մը զաւակն էր ինք, որուն
հայրը, անկարող ընտանիքին
ապրուստը ճարելու, 17, 20 տա-
րի առաջ գաղթած էր Պուլիս և
հաստատուած Իսկիւտարի մէջ :
Մանկութենէն անհանդարտ,
անզուսպ, ըմբոստ տղայ մըն էր
նշան, կուրի, զէնքի սիրահար,
բոլորովին հակապատկերը իր
վախկոտ, ստրկահոգի հօր՝ որուն
հետ շատ անգամ կը կուրէր և
երբեմն կը սպառնար նոյնիսկ
սպաննել զայն, եթէ իր ակնցիի
պահպանողականութեամբ ու շա-
համուրթեամբ համարձակէր պղ-
ծել իր պատանեկան բուռն պգա-
ցումներու սրբութիւնը : 13 14
տարեկան հասակին մէջ արդէն
սկսած էր յեղափոխական գոր-
ծունէութեամբ հետաքրքրուիլ,
միամիտ, մանկական ըմբռնողու-
թեամբ մը անշուշտ զինուորագ-

րուելով ազատագրութեան բա-
նակին, ինչ որ աւելի իր խառ-
նուածքին արիական պահանջքն
էր արդէն : Պանքայի ցոյցի օ-
րերուն, ամբողջովին զինուած՝
կըսպասէր որ յարձակում գոր-
ծեն իր բնակած խաղին վրայ,
որպէս զի առաջին հանդիպած
թուրքին գանկը պայթեցնէ :
Բարեբաղդարար Իսկիւտարի մէջ
ոչ մէկ դէպք չի պատահեցաւ,
և նշան գաղթականութեան հո-
սանքին հետ եկաւ Պուլկարիա
ինկաւ :
Տարիքին հետ իր խառնուած-
քին ու նկարագրին գծերն են
որ հետզհետեւ կը շեշտուին, կը
կերպաւորուին, վերջնական ու
հզօր կերպարանք կը զգեցնեն :
Իր զինուորական բնագրներն ու
ախորժակները այն աստիճան կը
զարգանան որ, Թուսուրի մէջ
շարունակ զօրքերու մարդագաշ-
տը կը յաճախէ, անոնց մար-
զանքներուն կը նկերակցի ու այն-
քան սիրելի կըլլայ սպաներուն
ու այնքան կը յառաջդիմէ իր
վարժութեանց մէջ, որ նորեկ
զինուորներուն կըսկսի ինք վար-
ժութիւններ ընել ու ցոյց տալ
թէ ինչ պէտք է ընել աւելի ա-
րագ ու լաւ սովելու համար :
Վառնա գալով, մտաւ կամա-
ւոր զինավարժներու խմբին մէջ,
որ այն ատեն կազմուած էր նոյն
խակ բանակին հսկողութեան տակ :
Նշան, այլեւս գտած էր իր
միջավայրը, առտու իրիկուն
չէր բաժուեր զինուորներէն ու
երբ քաղաք գար, իր բոլոր ծա-
նօթները կը ջանար համոզել որ
զինավարժութիւն ընեն : Գիշ ա-
տենէն լաւ զինավարժ մը եղաւ,
և ազատ մարզանքներուն արքե-
լումէն ետքը, ան միշտ շարու-
նակեց մարզուիլ ու մարզել պաղտ
նի :
Վառնայի մէջ իր դեռ կոյս
հոգին շատ անակնկալներու հան-
դիպեցաւ, իր աչքերով տեսաւ
վատ արարածներու անարգ խմ-
բակին հասարակութեան մէջ գոր-
ծած աւերումները : Չի կրցաւ
հանդուրժել ազգագրութեան

այն զարհուրելի փորձերուն զոր այդ խմբակը կը կատարէր շահուէ կ'փորձեր սպորմէնի հաշիւներով. նշանի գայրոյթը ու շափ շունեցաւ, մանաւանդ, երբ իր աշքերով կարգացու իր ականձներով լսեց հայհոյանքն իր, բայտաւնալիքները, սուտերը այդ շարաշուք արարածներուն՝ ուղղուած հայրութեան կեանքին ու հոգին դէմ. — Յեղափոխութեան ամենէն կենսալիք ազդիւրին հասցէին, Պետօի կատարանին օրերուն, մանաւանդ, նշան ազդին դիմեց, ահդին գիմեց, որպէս զի թոյլ տրուի իրեն մի աս մի մաքրելու այդ արարածները՝ որոնք իրենց ոտքը անգամ մը տիղ մի ովկիանոսին մէջ գրած՝ շէին վարաններ այլեւս մինչեւ վիզերին խորատուցուելու ինչ կար խրատներ, ինչ գծուարին ճիգեր հարկ եղան զայնեա կեցնելու համար իր շատ արդար ցանկութենէն, որպէս զի այդ թանկագին արեւը ստորնութեանց հերոսներուն համար մարտի շննթարկուի, եւ վերջապէս, իր ուղղական իրաւունքն լիակատար գոհացում տուլու համար, զրկուեցաւ կովկաս, որ գնաց հաճոյքէն և ուրախութենէն կարծես գինովցած:

Այլևս նոր կեանք մըն էր որ կը բացուէր նշանի առջեւ, որքան արգիւնաւէտ եղաւ այդ կեանքը, որքան յազմական թափնիներ հիւսեց հերոսին գլխուն, Ամէն վառագաւոր ձեռնարկ, ամէն յեղափոխական գործ զոր այս վերջին քառեակ տարիներուն մէջ ապրեցաւ կովկասը, և որ մահը կեանքին քով կանգնած կըսպանար շալուեակ, նշանի բազուկէն ելած է, նշանի անձնուրիւթիւնը պահանջում է, ժամհարեանի խնդրէն մինչեւ Զեմի կախուր, որ իր հերոսական կեանքի փառապատկար եղաւ...

Նշանի անձնական կենցաղը շատ համեստ, անփառունակ էր. Հակոբակ իր ուղղական խառնուածքին, լաւ ընկեր մըն էր ան, հեղ, համբերող, համուցող, հաւատարմ, հետաքրքիր ու խանթակալ ձոյլի կուտար իր ընկերին, որուն հետ կը կրօնէր միշտ իր վայելքներն ու միջոցները. Ենթոհիւ իր արհեստին լաւ գործ կը շահէր, բայց ինք չէր որ կը վայելէր իր աշխատութիւնը. ընդհակառակը, պատրաստուելով ապագայ ասպարէզին, անիկա կամաւոր զի կանք ներուէ կենթարկէր իր սննդ, որպէսզի զինուորի շարքաշուքիան ընտելանայ: Թէեւ նիւթական լաւ ապագան իր երեսին մշտապէս կը ծայտէր ու կրնար իր արհեստով լաւ ու ապահով կենցաղ մը ապահովել իրեն, բայց Գազափարի ուժը տիրական էր իր

մէջ, որ ամբողջ անսպաս հիացող, անոր անհրաժեշտաց հաւատարիմ հրկրապագու, Պետօի փառքին էր որ կը ցանկար հասնել իր կեանքին գնովը, որուն արժանացաւ վերջապէս:

ՊԼԵՅՎԷ
—(10)—

Պլեհվէն մարմնացուն էր այն սխալմին, որ ոչ մէկ միջոցի առիւկանց շանեկով՝ սարսափով ու աքտորով կը փորձէ պահպանել իր դաւանած սկզբունքները, Պետօի ցեղի վարդապետութեամբ տոգորուած՝ Պլեհվէն նոյնպէս կը կարծէր, որ ժամանակակից Ռուսիոյ կազմը ուրիշ կերպ կարելի չէ պահպանել, եթէ ոչ երկու սուանդակն սրենք: րո շնորհիւ՝ պարտականութեան և ուղղափառութեան, Սակայն մարդկայր ըլլալու էր, չը սեննելու համար թէ՛ դատարարութիւններու շրթան, որ արխանոս թելի մը պէս կերակրի ժամանակակից ռուսական պատմութեան միջով, պատմական երեւոյթ չէ՛: Ամէն մարդ գիտէր, որ Ռուսաստանի մէջ կատարի կոխմը կը մղէին՝ մէկ կողմէ ճնշուած մարդկային իրաւունքները և միւս կողմէ ոչ մէկ օրէնք և սահման չը ճանաչող իշխող կամայականութիւնը: կամայական աքտորներուն, առանց դատաստանական քննութեան ձերբակալութիւններուն, յուսահատուած մարդկանց ու անպաշտպան կանանց անգուր ձեռքին՝ ոտնակոխ եղանակը ատրճանակի հարուածներով և տինամիդի ուժերով կը պստասխանէն: Այդպէս ընկաւ լուսաւորութեան նախարար Բուկոյեւկովը, ներքին գործոց նախարար Սիպեակիրը կատարողի Բուկոյեւկովը, Գերմանախոյի ընդհանուր կատարողի Բորրիկովը, և վերջապէս նոյն բաղբին արժանացաւ և Պլեհվէն, Պլեհվէն ազնուականութեան սխալմի աշարակի գագաթ մըն էր, և աշարակի գագաթները կոյժակները իրենց կը քաշեն:

Անշուշտ Ռուսաստանի մէջ եղիր են պետական անձինք որոնք դրութեան վտանգաւորութիւնը ըմբռնելով՝ մտածել են քայլ առ քայլ զիջողութեամբ յեղափոխութիւնը վերածել յառաջողմ զարգացման, ստորապայցոյց են զիմաստովնրու կազմակերպութիւնը և անոնց իրաւունքները:

Կորիս Սելիֆովը մակեց նոյնիսկ վարչական նոր օրէնսդրութեան ծրարագիր մը, և թերեւս Ալեքսանտր Բ. ր ստորագրէր. որովհետեւ համամիտ էր, եթէ ճիշդ այդ վճռական վայրկեանին չըստանուէր, եւ հաւանական է որ այսօր Ռուսաստանը բաւական տեղ ետ ձգած ըլլար իսլաղ զարգացման ճամբուն վրայ, նաեւ խելոյի և հեռատես Վիտտէն նման փորձ մը սկսեց երկրագործական ժողովներ կազմելով խօսքի կատարելալ ազատութեամբ: Սակայն միշտ դիւրին պահպանողականութիւնը կը յաղիէր բարենորոգչական մտքերուն և կամայականութիւնը՝ օրէնքին: Պլեհվէն էր, որ Վիտտէի զգոյշ փորձերը ստանկոխ ընելով, իր խստութիւններով յանուն մարդկային իրաւունքներու կառող մտաւորական դասակարգի կատարութեան ու յուսահատութիւնը առաջ բերու, որոն, և ինքը զոհ գնաց: Ուրիշ ոչ

մէկ տեղ այնքան շօշափելի կերպով շարտայայտու իր շարութեան անիմեալ ըլլալը, որքան այս սխալմին մէջ, Իշխողներու անսահման կամայականութիւնը կը ստեղծէ ոճիրը, և ոճրագործութիւններով անոնց կը թուի ամէն անգթութիւն և բռնաբարութեամբ արդարացի, որոնք գործ կը գրուին ոճիրը պատժելու և ճնշելու ճամար, և որքան կամայականութեան վրայ հիմնուած կատարութիւն մը կը խախտի, այնքան ուղղայն պահպանողներու միջոցներու մէջ ընարութիւնը կը պակսի և Եսահա անդադար կը կուտին ուժը ուժի սարսափ սալստի դէմ, և զեռչի կարելի նախատեսել, ի և վերջապէս երբ այն սարսափելի խօսքը իր նշանակութիւնը պիտի կորսնցնէ ին՝ — Ռուսաստանը այն կերպին է, որ բռնապետութիւնը ոճրագործութեամբ կարելի է մեղմել:

Երբ կատարութիւն մը ամէն գործերու մէջ, թէ մեծ և թէ փոքր, չուզելը զգոյշ վարուի, երբ ոչ մէկ կամք չուզեր լսել յան իր կամքը երբ ոչ մէկ խորհուրդ չուզեր ընդունիլ, քան իր սեփական գոտորդութիւնը, այնժամանակ այդպիսի կատարութիւն մը չը պէտք է, որ իր անսխալականութիւնն ու ամենուկարողութիւնը կասկածի ենթարկէ: Բայց ինչ կը ներկայացնէ Ռուսաստանը նոյն այդ կատարութիւնը, որու մէջ իբր թէ ոչ մէկ հակասութիւն չը տիրէր, և հետո է սու է թուութիւն ցուցնելէ, արտաքին թշնամու հետ ունեցած կոռուի մէջ սակայն ինքզինքը այդ բարձրութեան վրայ չը ցոյց տար: Յանդարձակի կողմայ պատերազմի մը, որ սակայն իր ասիական քաղաքականութեան հետեւանին է, Ան չը կրցաւ վեց երկար արտաքին ընթացքին այնքան կարճ ճանել պատերազմի դաշար ոչ քան որ պէտք էր փոքրիկ ձաբունիան ճնշելու համար: Թէ հեղինակութիւնը կը խախտի և կատարութեան հակասակարգները սիրտ կանոն և կրկնակի ուժով կատարութեան անկուծը պատրաստելու, շատ հակահասի է:

Անշուշտ ճիշտ չէ, թէ սուս ժողովուրդը, որ ծուրկիւնէլ, Դաստակակի, Տօլստոյ և Չիխով է ծներ, հասուն ինքնորոշումի մը համար գեա աճաւ է: Ինչ որ մասնայի կրթութեան համար կը պակսի այդ շուտ կարելի է հոգալ, եթէ ներկայ սխալմին թուանորուած օգը, որու տակ ոչինչ չապրիր բացի անհազոր շինովիկութիւնը, պատուհանէ մը լայն թողուի: Թէ արդարութիւնը բոլոր պետութիւններու հիմքն է, այդպէս պիտի ըլլայ բնականօրէն նաեւ Ռուսիոյ համար, ինչպէս է միւս երկիրներու մէջ: Արդարութեան, մարդկային պատուի և իրաւունքներու յարգանքի աղաղակ բայարձակապէս լսելի է ուժերի պայթիւններուն մէջ: Այդ աղաղակը ցոյց կուտայ ապագայի ճամբան: Պլեհվէն կեանքի մէջ կը նախանձէր իր նախորդին և անոր օրինակին հետեւեցաւ մինչեւ վերջին վայրկեանը: Ռուսիոյ բոլոր անկեղծ բարեկամները կը ցանկան որ անոր յաջորդ իրեն չը նմանի, ոչ կեանքի և ոչ այ մահուն մէջ:

ՊԼԵՎԷԻ ԿԵՆՈՒՄԸ

Գաղանի խորհրդական և ձերական տի անդամ Վիաչեսլաւ Կոնստանտին-

նովիչ Փօն Պլեհվէն ներքին գործոց նախարարութեան ծանր պաշտօնը ստանձնեց նախարար Սիպեակիին բապաննու մէջ անմիջապէս յետոյ: Դեռ այն ժամանակ այս անուանուած Ռուսաստանի սէյ ընդհանուր դժգոհութիւն առաջ բերաւ, որովհետեւ Պլեհվէն Ալեքսանտր Գ. ի յետագէմ կատարութեան օրով ինչպէս գրուի պետական աստիականութեան, և զեկուցանող ներքին նախարարութեան ինքզինքը ցոյց էր տուեր դաւանացած ու երգողնալ թշնամի մը ուսանողութեան և բոլոր սպասական տարրերուն: Դժգոհութեան շափը անցուց մանաւանդ անոր բրած յայտարարութիւնը, երբ ներքին գործոց նախարար պաշտօնին կանչուեցաւ: Ի միջիայոց Պլեհվէն յայտարարեց — Սիպեակիին անունը կը յիշուի պետական մարդ մը, որ անձը անսահմանօրէն նուիրէր էր կայսեր և ուսական հեղաւորաց կեանքի հիմքերու պահպանութեանը: Հարգաւա այս մարդու անկեղծ, որ գիտցաւ մեզ փառաւոր դաս մը առլ հայապէր և պարտականութեան անդրուելի հաւատարմութեան կատարումն: Պաշտօնի բարձր նախը կ'աղերսեմ Ամենակարողին, որ ինձ բարոյական ուժը առլ հակադասութի օրինակին հետեւելու ու:

Գաղանի խորհրդական Փօն Պլեհվէն ծնած է 1848ին, Սոսկվայի համայնութի իրաւաբանական մասը աւարտելէն յետոյ: Սոսկվայի գաւառական դատարանի գատախաղութեան կանուեցաւ: Իր ցոյց տուած ընդունակութիւններու շնորհիւ, ընտանով նախ Վլադիմիրի, յետոյ թուրքի և Վորոնտի գատախաղ նշանակուեցաւ: Իր հետաքրքիր և սրամիտ ճառերը, քաղաքական յանցա որոնքը հետաքրքրելու և գտնուելու ետադր Պետերբուրգի գիտնոր արդարադատութեան պաշտօնեաներու ու շաղաքութիւնը իր վերայ հրաւիրեցին, և Պլեհվէն Պետերբուրգի գատախաղին գատախաղ նշանակուեցաւ: Այս պաշտօնի մէջ ան Ալեքսանտր Բ. ին անձամբ հաշիւ կուտար նիշխաններուն խաղարկութեան գործի ընթացքի մասին: Պլեհվէն ստանաւ որպէս նշանաւոր դարձաւ ձեռնայն պաշտաի մէջ կատարուած տինամիդային դաւադրութեան խուղարկութեան մէջ, իր ետանդի շնորհիւ յաջողեցաւ բոլոր դաւադրիւնը ձերբակալել: Այս պատճառով 1881ին պետական ստորկանութեան գլուխ նշանակուեցաւ, և անդամ ձերականութեան անդամ Կոնստանտին նախագահութեան տակ կազմուած մասնաճիւղին, որու նպատակն էր միջոցներ մշակել պետութեան մէջ խաղաղութիւն և կարգ պահպանելու համար, Այս պաշտօնին մէջ մնաց մինչեւ 1884 թուականը, և Ալեքսանտր Գ. ին ձերականութեան անգամ և զոհական ներքին գործոց նախարարութեան անուանուեցաւ: Այս օրէն վճռական մասնակցութիւն ունեցաւ ներքին գործոց նախարարութեան բոլոր ժանրակիւտ գործերուն մէջ: Անիկա միջոցներ մշակեց Ռուսիոյ գերմանական գաղութներուն, Օստրաւորայի ազնուականութեան, հրէաներու և բոլոր պետութեան ոչ ուղղափառ տարրերու դէմ:

1901 թուին Գերմանախոյի մէջ պետական նախարարութեան քարտուք զոր նշանակուեցաւ, որու միջոցին ամէն տեսակ միջոցներ մշակեց Գերմանական ուսացներ: Միջոցներ, որոնք երկիրը իր բոլոր իրաւունքներէն զրկեցին և առաջ բերին այն դատարարութեան ու յուզումը, որ արք

առաջադրուած ընդհանուր կառավարիչ Պարթևի սպանութեան գործի մէջ:

Երբ 1902ին նախարարական պաշտօնն առաւ, խնայելով սկսեալ գործադրել Պարթևի Գ. ի յետագէտ քաղաքականութիւնը Ասոր մեծ շարժումներն մէկն էր, իր գրեթէ ողորմագործական անտարբերութիւնը Գ. ի նկատմամբ: Երբ 1902ին Պարթևի գաղտնաբերութիւնը հայտնուեց, ուր արդարեալ նաև հայերու մէջ Պարթևին գնահատելու համար քաղաքականութեան մեծ շարժումներ սկսեցին: Ասոր միջոցով գրաւուած հայացք եկեղեցական կայունութիւնը գործը հայերու մէջ առաջ բերաւ վատնագործի գաղտնական շարժում մը, որ այսօր յայտնուեցաւ կազմակերպութեան մէջ: Երբ 1902ին Պարթևի վերջին գործն եղաւ Ֆինլանդական պրոֆեսորներու ձեռքարկումն և Մոսկովայի ու Քիւրի-ի ազատամիտ քաղաքագործի խնդրու հետագումը:

ՊԵՆՏԻՆԻ ԱՂԵՆՆԻՆԻՆԸ

Ռուսաստանի ներկայ քաղաքական կացութիւնը և յիշատակ մը համար այսօր ինչ որ արդարեւ չկէ, թէ հոն յեղափոխական տարրը վերջին ժամանակներս մասնաորակա գործուն էր, Ռուս յեղափոխական Գերբուշի տրոստաման ճառը Ֆլոբերիսկայի հրատարակութեան մէջ եկաւ բացատրելու վերջին յորհրդագրերէն: Այս անգամ Պարթևի անհաղար կատարած սպանութիւններու նշանակութիւնը մէկ ուրիշ քաղաքական յանգումն էր, զոր ըստ պատմութեան նախարար Պարթևին, լոկ Ռուսաստանի մէջ արդիւնաւոր գործը կը մտարածուելու համար, որոնք իրենց ձեռքերն զրկուելու և երկար տարիներու տաճանակիր շարժումները դատապարտելու տուաւ յայտնի ռուս պրոֆեսոր Անիշտովը, ու սակայն գոտաւորակ մէջ յայտարարեց Ռուսաստանը, որպէս սկսած պատմութեան և անկարգութեան և ուրիշ:

Անիշտովի և ասոր կերպով հանդիմանող ռուս երգիծաբան Ստոլովի մտածումները ինքը երբեմն կառավարիչ և հետեւաբար ռուսական ազնւորականութիւնը լաւ ճանաչող մը, ընդդէմ է ռուսական պաշտօնականութեան կամայականութեանը Ստոլովի մտածումները կը նկարագրէ ռուսական կառավարիչը հետեւեալ կերպով. Ռուս կառավարիչը ռուսական օրինակով կը գնէ արտաքին վրայ մտածելու ինքն ալ ինքն ալ անոր վրայ նստած կ'աղաղակէ — «Օրէնքը — ևս եմ օրէնքը»: Այս անտակալ պաշտօնական մըն էր նաև Պարթևին, Ասոր կառավարիչ թիւն, ինչպէս Պետեր Նուրովին պատմեց է ժամանակին, մէկ շատ բնորոշ գործով մը, Մագաճ ըլլալով կիֆլանտայի ազգատացած բողոքական ընտանիքէ մը, Պարթև մէկ լին ազնուական ընտանիքէ մը որդի գործեցաւ և գաղտնաբերութեանը հայեր Պարթևին լինակեցաւ, և Գրաք Մուրավիովը ինչ որ կ'ըսեցաւ ապստամբութիւնը արիւնի մէջ խեղդելու, Պարթևին չը քաղաքացաւ իր բարեբարները Մուրավիովի գահիցէն յանձնեցաւ, և երբ Անիշտովը ինչ որ ասէր անմիջապէս յետոյ Ռուսիոյ պետական օտարականութեան գլուխը բարձրացաւ, շտապեցաւ Պարթևին մէկ այսպէս անուանուած, սեւ խորհրդարանի կազմել, ուր Անիշտովը ինչ որ

նախարարներու նամակները՝ Պարթևին և Ռուսիոյ մէջ իրենց յրատարակութեան յայտնի պետական մարտիկներու կողմէն կը կարգադրուէին և կը քննուէին...

Բայց ամենամեծ շարժումները Պարթևին գործեց Ռուսաստանի մէջ իր երկու տարուան գործունէութեան մէջ իբրև ներքին գործող նախարար: Պարթևին գործը անցնելու վայրկեանէն կ'սկսէր այն ժամանակուայ ամենագործի մտից նախարար Վիտտելի գլուխը: Այս մարդը, որու պետական խելոյն ու շնորհքը Ռուսաստանի մէջ թէ՛ յարակալները և թէ՛ թշնամիները կը խոտովանէին, յաջողութեամբ կ'աշխատէր զրու թիւնը զարմանալիքով: Անիշտովը երկրի սոսկալի գործիցէն վրայ, և անհրաժեշտ բարենորոգումները գրեթէ անհրաժեշտ Վիտտելի Յարի հաճութեամբ կ'ազնուէր կրկնապարտական կոփակները և անոնց անդամներուն խոտաքայտ խոտքի կատարելով ազատութիւն և ճշտութեամբ ապահովութիւն ո՛ր և է պատմի համար: Եւ իրօք այս բնութիւն սկսած գանձատր ձայներ լսուի կրկին տիրող կարգէ, որու զէ՛մ, և ըստ շարժք բացարձակ միապետութեան մէջ գտնուող սկսած պահանջներ կրկնուեցաւ սոսկալ նախարարական կարգերու: Պարթևին սակայն այս կոփակներու ճառարտութեան մէջ մասը բանտարկել տալով և մէկ մասն ալ աքսոր դրկելով շտապեց Եւրոպա՝ Նարին պալատը երթալ զրպարտելու համար, թէ Վիտտելի է այս բոլոր զգոհութիւններու շարժումները և յեղափոխութիւնը զրգող պահանջներով այն կոփակներու փակուած: Յարը իր Պարթևին նախարարի խորհուրդներուն տեղի առաւ, և որով շնորհալի Վիտտելի հաստատուն զիրքի առաջին հարուածը տրուեցաւ...

Անցեալ գարնանը, երբ Վիտտելի կը պահանջէր Մանիլիան թողնել, և ռուսական արեւելքի քաղաքականութեան հետեւեալներու վրայ ուշադրութիւն կը հրահարէր, զարմեալ Պարթևին էր, որ այսպէս անուանուած Յարի արքայի վերջին կոտորածներէն հետ միաբանած, այն կուտակուեցաւ, որը Վիտտելի միացումը Ռուսաստանին պատրաստելու կ'ուզէ, Վիտտելի շայնքները կ'ապակել են իր կողմէ, և անոր պաշտօնականութիւնը պատրաստեց... Վիտտելի քաղաքական գործուն լինակէն հետագուեցաւ, սակայն իր բոլոր գործակութիւնները տարբերակ արագութեամբ մը կատարուեցան...

Պարթևին քաղաքականութեան կարծառնութիւնը իր վերջին պաշտօնավարութեան տարուան մէջ բազմաթիւ շնորհակցութիւններով երևան եկաւ: Ինչպէս զգաւորութիւնները Պարթևին քաղաքականութեան, նոյնիսկ կարծողներ կան թէ՛ անորմէ իրազրուեցան: Հրեաները շարժարեւ և անոնց մարդկային իրաւունքները բռնաբարելու գաղտնի ծրարները մը շակուեցան նոյն Պարթևին:

Հայոց հայրապետ Մկրտիչ Ա ընտրուեցաւ իր անհրաժեշտութեամբ Պարթևին հետ ունեցած յարաբերութեան: Ան խոտաքայտ կաթողիկոսին հայոց եկեղեցական կառուածներու գրաւումը վերջնել, և Յարին հետ տեսակցութիւն մը անոր յաջողացնել, սակայն ո՛չ միայն խոտաքայտ չը կատարեց, այլ եկեղեցապետական կառուածները գրաւելով՝ ամենակոպիտ կերպով կաթողիկոսի բոլոր ազգասերները ետ գարձուց:

Պարթևին վարժունքը կրկնապարտա-

կան ընկերութիւններու նկատմամբ յայտնի է: Ան գեղատօն առաջնակարգ անդամները, որոնց մէջ Մոսկովայի բաժնի տաղանդաւոր և հանգարա նախագահ Շիպովը հետագուց փակեց քանի մը գեղատօններ, և Յարին տուած տեղեկագրի մէջ գանձաք գրաւութեան: Պարթևին է, որ ձերբակալելու տուաւ բոլորէն յարգուած և սիրուած Ֆինլանդական գնդապետ ծերունի Եսուսանը, Բորիկովը սպաննողի հարը, ասոր ձերբակալումով Պարթևին կ'ուզէր վախ ներշնչել Ֆինլանդական հայրենասէրներուն:

Պարթևին պաշտօնավարութիւնը արդէն շատոնց Ռուսիոյ ազատական տարրերը գաղտնացուցիւ էր: Քանի մը ամիս առաջ Պետերբուրգի «Տիւնոր հիւրանոցի» մէջ զժամային մեքենայ մը պայթեցաւ, որ յատկացուած էր Պարթևին:

Ներկայ ռուսական պետական անձերու մէջ միայն մէկը կայ, որ ընդունակ է Պարթևին անցնել, Ռուսաստանի իր ժամանակակից ազատալի գրութեան փրկելու համար: Այս պետական մարդը Վիտտելի է:

ՊԵՆՏԻՆԻ ԱՂԵՆՆԻՆԻՆԸ ԵՎ ՆՈՐԻՆԸ

Գաղտնի խորհրդական Տուրնովոն ստանձնեց է ներքին գործող նախարարի պաշտօնը:

Գաղտնի խորհրդական և ձերբակոտի անդամ Տուրնովոն եղալին է երբեմն ներքին գործող նախարար և նախարարական խորհուրդի նախագահի, որ զէպէ Պարթևին բաժնուած ամբողջութեամբ ստացաւ: Առժամանակեայ նախարար Տուրնովոն ամենատարբեր օգնական էր Պարթևին: Ասիկա իր քաղաքական հայեացքներով խիստ պահպանողական մըն է, Վերջին տարիները Պարթևին շատ մտակ էր և անոր քաղաքական հայեացքները կատարելապէս կը բաժնէր, ինքն ասոր նախարարութիւնը մշտական ըլլայ, զրու թիւնը Ռուսիոյ մէջ աւելի պիտի վատանայ, որովհետեւ Տուրնովոն մէկն է Պարթևին առանցութիւնները մարմնացնողներէն: Այս պատճառաւ իսկ յեղափոխական տարրերը աւելի զգոհ սկսած կ'ուր արդող յեթմի զէ՛մ աւելի պիտի սաստկացնեն:

ՊԵՆՏԻՆԻ ՍՊՈՆԵՆԻՆԻՆԸ ԵՎ ՆՈՐԻՆԸ

Փարիզ. — Պարթևին անհրաժեշտ ո՛չ հայ է ո՛չ Ֆինլանդացի և ո՛չ ալ հըրբէյ, այլ ռուս: Իր վերջերէն առողջացածին պէս պիտի տարու Պետրովովի բերդը: Այս իսկ բանտի մէջ այս օրերս յայտնի անիշտանական լինովը իր փողկապի ասեղով անձնասպան է եղեր:

ՏՐԱՄԱՆԻՆԻՆԻՆԸ ԵՎ ՊԵՆՏԻՆԻՆԸ ԲՈՒՐԳԻ ՍԷՉ

Բոլոր տեղեկութիւնները կը շատատեն, թէ Պետրովովի բնակչութեան արեւմտեայ յարգումն անգամ չունի: Հաւանացած են նոյնպէս թէ անհրաժեշտութեան ձեռքով Պարթևին անապացուցած օդի ճնշումէն կայսրուի ճանարի

կերտները մարեցան: Ոստիկանութեան առաջին հոգն եղաւ նախ քան սպաննուածներու զիտակներով հետաքրքրուելը ճանարի մտեր Վառնի, հաւանականաբար, որպէս զի զժամագրութիւն չը պատահի:

ՊԵՆՏԻՆԻ ԱՂԵՆՆԻՆԻՆԸ

Պարթևին կառքը երկաթապատ էր, և ապահով գնդակի տուալ, միայն ռուսեր կրնար բան մը բնել: Անհրաժեշտները այս գիտէին: Երբ Պարթևին տուեց զուրս եկաւ, ցատկեց կոտորէն մէջ, զոր իսկոյն ձիաւոր եւ հեծանաւոր ուսիկանական կրկնակի շարժումով շարժապատեցին: Խոր եւ փակուած կառքը պզգիկ անտոցի մ'էր նման, անկարելի էր նոյնիսկ կառքի պատու հանէն նախարարը տեսնել:

ՆՈՐ ՏԵՍՍԻՆԻ ՌՈՒՄԲ ԸՐԸ

Ռուսներն ոչ մէկ հետք չեն կարողացած գտնել և չը գիտեն թէ ինչ բանով էր լինուած: Պարթևին ամենաշնորհը հոտ չէ՝ ստաջանացուած: Անտարակոյս ապկա նոր զիտ մըն է, որ անիշտանական գործարանները յառաջադիմող գիտութեան հետ կը կատարելագործեն:


ԱՆԻՍԿԱՆԻՆԻ ՊԱՏՄԱՆԸ

Գիւղացի մը, որ սպաննութիւնը կատարուած վայրկեանին մտակալ արձարանի մը մէջ նստած էր այսպէս կը պատմէ — Անիշտովոյ հետ թէյ խը մեղու վրայ էի, երբ փողոցին մէջ սոսկալի պայթիւն մը լսեցինք: Սորձարանի տպակիները փշուր փշուր և փողոցը ծուխով ծածկուեցաւ: Երբ ծուխը նստացաւ տեսայ զհետի վրայ շախախտուած կառք մը եւ մարդու մը մնացողները: Ոստիկանութիւնը իսկոյն ձերբակալեց անհրաժեշտը, որ կ'աղաղակէր — Ասիկա ոչինչ է հաւանաբար այն բաներուն հետ, որով զիտ պիտի գտնուես: Ես մեկ հետ չեմ:

ԱՀԱՐԵԿԻՉԸ ԱՀԱՐԸ

Պետերբուրգէն Ֆրանսական Ռաիից թերթին կը հարգուեն, թէ ստիկանութիւնը այսպիսի մտի վրայ կը գրեցան: Անիշտովոյ ձերբակալութիւններուն մէջ: Անհրաժեշտը, որուն կառք մէկ կ'ապստէր, ռուսը նետելէն յետոյ կարողացի է կառք մտնել և փախչել: Անիշտովոյ կը պատկանի անհրաժեշտ կան փողոցի խումբի մը, որ յայտնի է — Սկոտլանդական կառքով թիւն անուանով: Այս խումբին կը պատկանէր նաև Պարթևին նախորդ Սիպակիինի անհրաժեշտ Պարթևին: Այս կազմակերպութիւնը անկախ է և առանձին կը գործէ ռուսական ընկերակազմական երկու ճիւղերէն — Սոցիալ-տեմոկրատական-բանտարական և յեղափոխական-ընկերակազմական:

Ն. Յ. Պ.



ՍՍԱՌԻՆԻ ԿՈՒՆԻՆԵՐՈՒՆ ԱՌԻՓՈՎ

4.

ՈՐՈՆՑ ՀԱՄԱՐ ԿԸ ԽՍՈՒԻ

—)0(—

Ի՞նչ պիտի ընենք եւ ի՞նչ կրենք երկունքի աւ օրերուն .

Մինչդեռ ամէնքուս ուշադրութիւնը պէտք էր կեդրոնանար մեր փրկութեան ճամբուն վրայ . վրէժի, կռիւի զգացումները միայն պէտք է հրահրուէր հայ ազգի ամբողջութեան մէջ եւ առ բանին վրայ պետք էր միայն ու միայն կեդրոնացնէինք մեր ամբողջ ժամանակն ու ուժերը, զըժբաղդարար տասնամեայ դառն եւ աչք ծակող իրականութենէ մը ետք, տասնամեայ յեղափոխական բրօքա-կանդայէ մը ետք, նորէն ստիպուած ենք երբեմն կանգ առնել եւ զբաղի մեր ներքին թշնամիներով, մեր ցե-ցերով, մեր հակայեղափոխական տարրով...

«Հայի հայրենիքը յօշոտուած է դրսից, յօշոտուած է ներսից» .

Ոչ մէկ ազգ ապահովարար իր մէջը չէ սնուցեր այնքան «ազոտտ տարրեր», մի միայն օսպրելու եւ շորթելու համար ամբողջ ազգի մը փառաւոր եւ բաղձալի հեռանկարը վրասանգող Ազգասպաններ՝ որքան մեր ազգը .

Ոչ մէկ ազգ ապահովարան այնքան «ապրախտ անազնիւ ու անխիղճ» չէ գտնուած զէպի հայրենիքի համար թափուած պաշտելի արիւնները, մարած ճիւղն կեանքերը՝ որքան մեր ազգը .

Ոչ մէկ ազգի մէջի ազոտտ տարրերը իրենց զգիւն դժբախտ վայրկեանները այնքան անբարատաւն ու սագայելական խղճերով չեն շահագործած՝ որքան կրնեն մեր «Վերակազմեալ Ազգասպանութեան առաջնորդները» եւ մեր սարկուիստները կա-յացուցիչները .

—Ձգեցէ՛ք, աղբար, ձգեցէ՛ք աստ անպիտանները—կրանն ցաւակցական շեշտով մը շատ մը սիրտցաւ հայեր—թողէ՛ք անոնք իրենց իրան, թողէ՛ք ունան, որքան կուզեն, չէ՛ որ իրենց զգուցիլ պատկերները իրենց կը նկարեն, չէ՛ որ ճշմարտութիւնը կուտողներուն կողմն է, չէ՛ որ հայ իրականութիւնն է Յեղափոխական կարապետը . . .

Այո՛, ոչ մէկ յեղափոխական, ոչ մէկ զգացող հայ իրեն թոյլ չէր տար վայրկեան մը չանգամ էզբաղիլ մեր ցեղերով, համոզուած ըլլալով որ—անոնք կը դաւեն զիսակցաբար, կը հայնոյնն, կը խեղութիւնն, կը ստորնանան, ու կը շոտքնն զիսակցաբար .

Այո՛, ոչ մէկ սրտցաւ, գիտակից հայ չէր հետաքրքրուեր հայութեան ստ լազտերով, գիտնալով որ մէկ նպատակ ունին անոնք—հայի խնդիրը, մէկ կիրք ունին—նախանձը, հակառակութիւնը, անկարողութեան կատաղութիւնը, մէկ համոզում ունին—հակայեղափոխականութիւնը .

Ոչ ալ մէկը ճանձրոյթը յանձն պիտի առնէր ժամովաճառ ըլլալ այն անպէտք տարրին համար, որ առանց պուտ մը զոհողութիւն յանձն առնելու, առանց նոյնիսկ մտածելու, գատելու կարողութիւնը ունենալու, արտաոց պահանջներ կուեննայ եւ հանդիպած թերթին գրածին ասան՝

կրէ, լերկի «մեզան» մտնալով եւ յրուան սպառնութեան ու ազդեցութեան տակ քարշ կուտայ իր գոյութիւնը, միշտ անպէտք, միշտ արհամայելի .

Եւ կամ, հայ տառապանքին ու զիւցանութիւններուն հանդէպ ամեն տեղ եւ ամեն պարագայի տակ կարծրորէն անտարբեր, ապրող եւ անտարբեր մեռնող ապառաժները փչրելու անիրականալի միտքն է որ կը զրդէ իւրաքանչիւր գրող .

Ոչ մէկը, ոչ միւսը .

Կը գրուի, կը խօսուի երբեմն այն հայերուն համար, որոնք սիրտ մը ունին բարատող, բայց դեռ թոյլ, որոնք միտք մը ունին պատելու ճշգնտող, բայց անորոշ ու տարտամ, երբեմն մոլորելու հակամէտ որոնք՝ զգացում մը ունին լաւ ու գործելու արամաղիւր եւ սակայն թունալից խօսքերէ շագուելու շափ տակաւին չի պատրաստուած .

Ահա՛ ի՛նչ որոնց համար կը խօսուի, կը կրկնուի .

Դառնանք ներկային .

Սասունի դիւցազնական կռիւններն ու պատահած դժբախտութիւնները նոր առիթ բացած կերեւին մեր ներքին թշնամիներուն .

Բոլոր «Վերակազմեալ ազգասպանները եւ «Ստրկութեան փողարները» ուսկաններն շաղկապ զէպի պղտոր ջուրի գետափը իջած են եւ կը բղաւեն դիւային եւ պարզելի համբաղով մը .

—Ահա՛ անպատկառ ազգասպաններ, ջարդեցիք, կոտորեցիք . Սասունի ժողովուրդը կը բողբէ... Ի՞նչու ուրիշ տեղեր ալ կուտարած չըլլար... Ա՛լ մեռանք, կորանք... մատնեցիք Սասունը... ընդհանուր ապստամբութիւն պէտք է եւ ատոր գաղտնիքն ալ «վերակազմեալ գաղափարը» գիտէ, Ամերիկայի ժողովուրդ, առէ՛ք առէ՛ք, առէ՛ք, մենք կուտարածը ընել չի տալու գաղտնիքը գիտենք... Ու անվերջ, անվերջ վայոցներ, թուրու ու թահարից, ու անվերջ անվերջ նախատինք զէպի հայ հերոսի թափած արիւնին, վրէժի արիւնին... .

Հին յանկերգն է որ կը կրնուի, հին խաղերն են որ կը խաղցուին «Ճարպիկ օյինպազու» թիւնովով .

Հակայեղափոխական գաղափարը վարագուրուած է այս անգամ սեղափոխական հեռատես, նպատակա-յարմար ճառերովու՝ Միշտ ճառեր սակայն, չէ՛ որ աստ մարդիկը կեանքը չեն ճանչնար կամ ճանչնալ չեն ուզեր, չէ՛ որ գործի մարդիկ չեն եւ ճառերով կուզեն լարմար մոլորեցնել, խաբել ու շորթել .

Բայց հայ ընտանտակ կուտողները հայնոյնք չեն պահանջեր—այլ վրէժ, հայ տառապողը կեղծ վայոցներ չուզիր—այլ Գո՛րծ, Ձե՛նք, օգնութիւն... .

Ճառերն ու ճառախօսները նոյն են, բայց լարեբաղդարար մտիկ բնողները փոխուած եւ բուական փոխուած .

Ամերիկան է որ իր ծանօթ եւ յեղեղուկ «ամբոխային տրամադրութիւններով» փայլելու վրայ կերեւայ, եւ տարբեր բան չէր կարելի սպասել ամբոխ մնացած աստ ժողովուրդէն, որ հայ ազգի տղաքներ սնուցեր է իր մէջ տարիներով, եւ հազար ու մէկ խախտութիւններուն առջեւ մտքով ու զգացումով կողմնացեր է .

Իսկ արտասահմանի միւս գաղութները, որուն մէջ Գոլկարիան բա-

ւական լաւ սեղ մը գրաւած կերեւայ, աւելի աչքի կը դարնեն իրենց յեղափոխական տրամադրութիւններով եւ յեղափոխական սեղմուած ու անձաճարքերով .

Եթէ հակառակը ըլլար, կենդանի փաստ առած պիտի ըլլայինք—որ մենք ինչպէս մեր ազատութեան ճամբուն վրայ թափուած արիւններուն անարժան ենք, որ մենք ստրկութեան, տանջանքի դատապարտուելիք ըլլալու ազգ ենք .

Այո՛, հակառակը պէտք չէր որ ըլլար .

Ի՞նչ, միթէ Լօստոնի համաժողովին մէջ Անձէտ-Բիզան տարբեր բանը սաւ հայ անունը կրող եւ հայ դատի անունից ճակատոր եղող մեր «Ձայն», Հայրենեացնեղներն () եւ «Ռուսուքներն» () .

Ի՞նչ, միթէ կարմիր-Գազան ալ նոյնը չի՞ կրկնուի, ճակատոր չըլլա՞ր կոտորածներու պատասխանատուութիւնը յեղափոխականներուն վրայ ձգել, կռիւները փաստակար յայտարարել, ինչպէս որ ներկայիս մէջ կընեն «Ձայն հայրենեաց»ները, «Ռուսուքները» .

Ի՞նչ միթէ թշնամին ալ կուտողները «ոճրագործ», սանգամ, «աւազակ» չա՞նուաներ .

Ի՞նչ է տարբերութիւնը ուրեմն թշնամին եւ հայ անունը կրող վաստերուն մէջ, երկուքն ալ մէկ հողի վրայ կեցած են .

Ընդհակառակը համեմատութիւնը շատ աւելի զարնուրելի է . — Անձէտ-Բիզաններն ու Սուլթանները իրենց շահերը կը պաշտպանեն, ոճիրները կարգաբացնեն, իսկ «Ձայն հայրենեաց»ներն ու «Ռուսուքները» — իրենց հայրենիքը, իրենց կառուցները կը դաւաճանեն... .

Աւստի կը իր բովանդակ անեղիւթեամբ ու «ոճրագործային ազգասպան հրէշտութեամբ» ալ աւելի կը ցցուի մեր զէմը, երբ նկատուան ենք որ, օխտը պորտ օտար եւրոպացիները երկիրէ երկիր կը վազվզեն, վսեմ ճիզեր կընեն Անձէտ Բիզանները գատապարտելու, Սուլթանին ոճիրները ճշգրտու, եւ կուտող յեղափոխականը արգարացնելու, անոր դիւցազնական քայլերը զրուստելու .

Ի՞նչ պիտի ըսէին եւրոպացի հայաստները, երբ կարգային հայ-Անձէտ Բիզաններու սուլթանաւայել քարոզներն ու փաստաբանական ճառերը .

Ի՞նչ թուք, ի՞նչ մուր, ի՞նչ նախատինք պիտի նետէին անոնց երեսին .

Դատեցէ՛ք...
Տիկիպէ ԺԻՐԱՅԻ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍ—ՃԱՐՈՂԱՎՈՐ
ԳԱՏԵՐԱԶՄ

Ռեօյթի գործակալութիւնը Թօքիօն կիմանայ թէ, Բ. Արթուրէն հաւած տեղեկութեանց համաձայն, անցեալ ուրբաթ ճառնցիք յալոյցած են տիրել քաղաքին դուրսի վերջին ամրութեանց որոնք մինչեւ այժմ գեոպուսերուն ձեռքը կը մնային . Հիմա կռիւը կը մղուի քաղաքին ներքին ամրութեանց դէմ . Ռուսները հերոսաբար կը կռուին ու

իրենց գիրքերէն քայլ առ քայլ կը նահանջեն . Կռիւը շատ արեւնալի է եւ երկու կողմէն հազար կորուստներ տեղի կուենան . Ամրութեանց գրաւումէն յետոյ, ամբողջ մարդկութիւնը դարուսամէնէն հնկ պատերազմին նըկարագրութիւնն է որ պիտի կարգայ .

Եանհայ-քուան եկած շինացիք կը հաստատեն թէ ճարոնցի զօրքեր յայտնուած են ամենայնուամրութեանց առջեւ, կռիւը պիտի շարունակուի մինչեւ քաղաքին փոլոցներու մէջ .

Բեթերսպուրկէն Գերլին հասնող լուրերը Բ. Արթուրի գրութիւնը խիստ ճգնաժամային կը նկատեն եւ կընդունին որ քաղաքը իր անկման նախընթացի մէջ կը գտնուի .

Հոռոմ հասնող լուրերն ալ կը հազորդեն թէ գրութիւնը բոլորովին յուսահատական է . Իսկ առգին, Հայչէնկի մօտ, երեք օրէի վեր վճռական ճակատամարտ կը մղուի, ուր զօրավար Գիլիսուսը մը սպաննուեր է .

Հեռագիրները Գուրգաթիքի Մուքաթէն քաջուրը շատ զժուրին ու աղէտալի կը գտնեն, որովհետեւ տրամագրելի քանակութեամբ ուժ չիկայ իր մօտ . Սիպրական երկաթուղին վերջի շարժումն միայն ազգամթերք փոխադրեց . Իսկ յալոյց մէկ սուտան մէջ ալ օւկ է զինուորական փոխադրութիւն կատարելու վիճակին մէջ չի պիտի ըլլայ .

«Թայմզ» ալ կրեացնէ թէ անսերը Բ. Արթուրին առջեւ ունեցած իրենց նաւերը ամբողջովին ընկղմեր են . Միայն Ռիկ-Լեոն ամրութիւնները կը մնան անսերու ձեռքը .

Անգլիական թերթերը կը հազորդեն թէ ծովակալ Գամիմուրայի նուատորմիզը Յասիմա նեղուցին առջեւ հանդիպեր է վրասիփօսթօքի նաւաբաժնին, ծովային բուռն կռիւ մը սկսեր է երկու նաւատորմիզներուն մէջ, ուստական յաճուարակ մը ընկղմեր է, ճարոնցի ալ փաստեր ունեցեր են .

ՅՐԱՆՍԱ

Յրանսայի ե վատիկանի միջև յարաբերութիւնները բոլորովին խղուած ըլլալով, Հուռմի Գապըրոնչեր է եկեղեցիներուն մէջ Բոմպը անիծել ե Յրանսայէն առնել Արեւելքի կաթոլիկ քրիստոնէից պաշտպանի գերբ .

ОТГОВОРНИКЪ

Мурадъ-Враносянъ

Печатница „Възвѣстность“ Варна